ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ջեռուցման համակարգի կցամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 31.10.2018թ. N 307/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Վանյանը, Ս.Սարգսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղը զբաղեցրած «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգով ներկայացված փաստաթղթերը արձանագրեց, որ «Էկոմիքս» ՍՊԸ–ն Հավելված-2-ում նշել է, որ կից ներկայացնում է նաև գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, համատեղ գործունեության պայմանագրի պատճենը և սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, սակայն այդ փաստաթղթերը բացակայում են:
-Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի 7.16 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Էկոմիքս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:
Հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 21-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյան

Անդամներ՝ Հ.Վանյան

Ս.Սարգսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան